ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԴԱՎԻԹ ՍԱՆԱՍԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 28-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԻ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28-Ա

ք. Երևան 18 մարտի 2019թ.

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը, կազմով՝ Արմեն Խուդավերդյանի, Էդգար Շաթիրյանի, Արտակ Սարգսյանի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով),

համաձայն «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 44-րդ հոդվածի,

քննարկելով Երևանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանի դիմումի հիման վրա Պետական վերահսկողական ծառայության պետ Դավիթ Սանասարյանի կողմից էթիկայի կանոնի խախտման վերաբերյալ հարցը,

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Պետական վերահսկողական ծառայության պետ Դավիթ Սանասարյանի կողմից էթիկայի կանոնի խախտման վերաբերյալ եզրակացությունը՝ համաձայն կից հավելվածի:

2. Առաջարկել Պետական վերահսկողական ծառայությանը, ի կատարումն «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի պահանջների, եզրակացությունը տեղադրել Պետական վերահսկողական ծառայության կայքէջում:

3. Էթիկայի կանոնի խախտման վերաբերյալ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը սահմանված կարգով ուղարկել Հայաստանի Հանրապետության վարչապետին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՄԵՆ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԷԴԳԱՐ ՇԱԹԻՐՅԱՆ

ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Բարձրաստիճան պաշտոնատար անձանց
էթիկայի հանձնաժողովի
18.03.2019թ. թիվ 28-Ա որոշման

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԴԱՎԻԹ ՍԱՆԱՍԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 28-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԻ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան **18 մարտի 2019թ.**

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը, կազմով՝ Արմեն Խուդավերդյանի, Էդգար Շաթիրյանի, Արտակ Սարգսյանի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով),

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 44-րդ հոդվածի հիման վրա քննության առավ Երևանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանի դիմումի հիման վրա Պետական վերահսկողական ծառայության պետ Դավիթ Սանասարյանի կողմից Օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ամրագրված էթիկայի կանոնի առերևույթ խախտման հարցը:

1. 2019 թվականի հունվարի 17-ին Հանձնաժողով է մուտքագրվել Երևանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանի (այսուհետ նաև՝ Դիմող) Հանձնաժողովին հասցեագրված դիմումը, որով Դիմողը Հանձնաժողովին խնդրել է ձեռնարկել օրենքով սահմանված միջոցառումներ ներքոնշյալի առնչությամբ.

Դիմումի համառոտ բովանդակությունը

Ըստ Դիմողի՝ Երևանի պետական համալսարանում Պետական վերահսկողական ծառայության պետ Դավիթ Սանասարյանի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից 2018 թվականի հուլիսի 30-ից իրականացվող ուսումնասիրությունների ընթացքում Պետական վերահսկողական ծառայության պետ Դ. Սանասարյանն արել է հրապարակային հայտարարություններ, որոնք, Դիմողի կարծիքով, հանգեցնում են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով ամրագրված էթիկայի կանոնների կոպտագույն խախտումների: Դիմողը, մասնավորապես, վկայակոչում է Պետական վերահսկողական ծառայության պետի 2018 թվականի հոկտեմբերի 25-ի հայտարարությունը

ուսումնասիրության արդյունքում Երևանի պետական համալսարանում բացահայտված չարաշահումների մասին (https://www.azatutyun.am/a/29563528.html հղման ներքո), որն, ըստ Դիմողի, արվել է մինչև ուսումնասիրության արդյունքներն օրենքով սահմանված կարգով ամփոփելը: Դիմողը գտնում է, որ Դ. Սանասարյանի վերոնշյալ հայտարարությունը ժամանակավրեպ է, քանի որ դրանից հետո ուսումնասիրությունները շարունակվել են շուրջ երկու ամիս: Դիմողը, հղում կատարելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթների, գտնում է, որ Պետական վերահսկողական ծառայության պետը չի դրսևորել հավասարակշռված մոտեցում, պատշաճ մասնագիտական օբյեկտիվություն և կանխակալ ու խտրական վերաբերմունք է ցուցաբերել Երևանի պետական համալսարանի նկատմամբ: Դիմողի գնահատմամբ՝ Դ. Սանասարյանի վերոնշյալ հայտարարությունը համապատասխան հանձնաժողովին տրված հրապարակային հանձնարարություն է՝ ամեն գնով Երևանի պետական համալսարանի գործունեության մեջ գտնել Դ. Սանասարյանի կողմից նշված գումարի չափով չարաշահումներ: Դիմումում վկայակոչված են նաև Դ. Սանասարյանի կողմից ֆեյսբուքյան իր էջում կատարված վերաբերելի գրառումները, որոնք, ըստ Դիմողի, ուղղված են եղել Երևանի պետական համալսարանի նկատմամբ բացասական վերաբերմունք ձևավորելուն: Դիմողը գտնում է, որ մինչև ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ Երևանի պետական համալսարանի կարծիքը ստանալը ուսումնասիրության նյութերը դատախազություն ուղարկելը չհիմնավորված շտապողականություն է և խոսում է պաշտոնատար անձի կողմից տվյալ գործի ելքով անձնական շահագրգռվածություն ունենալու մասին: Ըստ դիմողի՝ Պետական վերահսկողական ծառայության ղեկավարի կողմից 2019 թվականի հունվարի 11-ին հրավիրված մամուլի ասուլիսի ընթացքում արված՝ Երևանի պետական համալսարանի գործի՝ դատարան գնալը երաշխավորելու մասին հայտարարությունը Դ. Սանասարյանի կողմից գործադրվող բացարձակ ճնշում է իրավապահ մարմինների նկատմամբ՝ նրանց դրդելով և ուղղորդելով անպայմանորեն հարուցել քրեական գործ և դրա արդյունքներով գործն (ըստ մեղադրական եզրակացության) ուղարկել դատարան:

Դիմումին կցված են փաստաթղթերի պատճեններ և այլ նյութեր, մասնավորապես՝ Պետական վերահսկողական ծառայության պետի 2018 թվականի հուլիսի 30-ի N 011 հանձնարարագրի, Պետական վերահսկողական ծառայության ղեկավարի 2018 թվականի հոկտեմբերի 1-ի N 31 Ա հրամանի, 2018 թվականի նոյեմբերի 30-ի N-70 Ա հրամանի պատճենները, Դ. Սանասարյանի, ՀՀ պետական վերահսկողական ծառայության ֆեյսբուքյան էջերում կատարված գրառումների առկայությունը հավաստող և դրանց բովանդակությունN արտացոլող նյութերի պատճենները:

2. Վարույթի հարուցումը

Դիմումում նշված փաստերի ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովը, մասնավորապես, պարզել է.

Պետական վերահսկողական ծառայության կողմից Երևանի պետական համալսարանում իրականացվող ուսումնասիրությունների առնչությամբ, 2018 թվականի հոկտեմբերի 25-ին Դ. Սանասարյանը հայտարարել է. «...ԵՊՀ-ն առաջիկայում կվերջացնենք, լուրջ խախտումներ կան ԵՊՀ-ում ևս: Հիմա չեմ ասելու ինչ խախտումների մասին է խոսքը: Գումարն էլ վերջնական չի, դրա համար ոչ մի բան չեմ կարող ասել: Բայց կարող եմ ասել, որ, նախնական տվյալներով, երկու անգամ կամ ավելի գերազանցելու է Ագրարային համալսարանին»: Հարցին, թե ի՞նչ կարգի խախտումների մասին է խոսքը, Սանասարյանն արձագանքել է՝ «Ընդհանուր բան եմ ասելու, չեմ մանրամասնելու: Էս պահին կարող եմ ասել, որ մենք նայում ենք ծախսերը, ու ծախսերը ուսումնասիրելով, կարող ենք ասել, որ բավականին լուրջ թիվ է: Էդ թվում քրեական հանցագործության տարրեր կան»: Հարցին, թե արդյո՞ք ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը որևէ կերպ կապված է նշված չարաշահումների հետ, Սանասարյանը պատասխանել է՝ «Էդ բոլոր հարցերի պատասխանները իրավապահները կտան:» (https://www.azatutyun.am/a/29563528.html):

Վերոնշյալի առնչությամբ, Երևանի պետական համալսարանը 2018 թվականի հոկտեմբերի 25-ին հայտարարություն է տարածել՝ դատապարտելով Պետական վերահսկողական ծառայության պետի նմանօրինակ գործելաոճը, հորդորելով նրան դրսևորել պետական բարձրաստիճան պաշտոնյային վայել վարքագիծ և ապահովել իրականացվող վերահսկողության անաչառությունը (http://www.ysu.am/news/hy/Announcement-25-10-18):

2018 թվականի դեկտեմբերի 28-ին Դ. Սանասարյանը ֆեյսբուքյան իր էջում գրառում է կատարել՝ հետևյալ բովանդակությամբ. «Հանրային հաշվետվություն

ԵՊՀ-ում շուրջ 2 ամիս տևած ուսումնասիրության արդյունքները ուղարկվեց դատախազություն: Ըստ մեր նախնական գնահատականի հիմնադրամին հասցվել է ավելի քան 800 մլն դրամի վնաս: Սակայն հավաստիացնում եմ, որ եթե ավելի երկար ուսումնասիրեինք, վնասների արձանագրումները կավելանային:

ԵՊՀ ուսումնասիրության վերաբերյալ մանրամասն ներկայացնելու ենք առաջիկա ասուլիսի ժամանակ:» (https://www.facebook.com/sanasaryan):

2019 թվականի հունվարի 11-ին հրավիրված մամուլի ասուլիսի ընթացքում Դ. Սանասարյանն ասել է. «Ես երաշխավորում եմ, վստահեցնում եմ ձեզ, որ այս գործը դատարան է գնալու:» (https://factor.am/113964.html):

Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 26-ի թիվ 27-Ա որոշմամբ Երևանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանի դիմումի հիման վրա հարուցվել է վարույթ՝ Պետական վերահսկողական ծառայության պետ Դավիթ Սանասարյանի կողմից Օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ամրագրված էթիկայի կանոնի («իր գործունեությամբ նպաստել իր զբաղեցրած պաշտոնի և իր ներկայացրած մարմնի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը») առերևույթ խախտման հատկանիշներով:

Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ Ե-222 գրությամբ Պետական վերահսկողական ծառայության պետ Դ. Սանասարյանին ուղարկվել են Երևանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանի 2019 թվականի հունվարի 17-ին Հանձնաժողով մուտքագրված դիմումի պատճենը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 26-ի թիվ 27-Ա որոշումը (վարույթ հարուցելու մասին): Դ. Սանասարյանին առաջարկվել է տասնօրյա ժամկետում ներկայացնել քննարկվող հարցի վերաբերյալ իր առարկությունները և բացատրությունները:

3. Պետական վերահսկողական ծառայության պետ Դավիթ Սանասարյանի առարկությունները

2019 թվականի մարտի 11-ին Հանձնաժողովն էլեկտրոնային տարբերակով (փաստաթղթի համարը՝ Ե/379-19) ստացել է Պետական վերահսկողական ծառայության պետ Դավիթ Սանասարյանի առարկությունները:

Առարկությունների համառոտ բովանդակությունը

Ըստ Դ. Սանասարյանի՝ «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումներից հետևում է, որ «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնները գործել են մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը: Պետական վերահսկողական ծառայության ղեկավարի կողմից հոկտեմբերի 1-ից հետո արված հայտարարությունները որևէ կերպ ենթակա չեն գնահատման որպես «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ամրագրված էթիկայի կանոնի առերևույթ խախտում, քանի որ համապատասխան իրավակարգավորումների գործողությունը դադարել է 2018 թվականի հոկտեմբերի 1-ին:

Ըստ Դ. Սանասարյանի՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն վարույթը հարուցվել է «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի հիմքով՝ նշված հոդվածի համակարգային վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ այն վերաբերում է բարձրաստիճան պաշտոնատար անձի նկատմամբ հարուցված վարույթին, մինչդեռ նույն օրենքով սահմանված չէ բարձրաստիճան պաշտոնատար անձի հասկացությունը (բարձրաստիճան պաշտոնատար անձի հասկացությունը սահմանող իրավական դրույթները ևս ուժը կորցրել են «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն): Ուստի՝ նշված հոդվածի հիմքով Պետական վերահսկողական ծառայության ղեկավարի նկատմամբ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից վարույթ չէր կարող հարուցվել: Դ. Սանասարյանը գտնում է, որ «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված

կարգավորումները բացառապես վերաբերում են «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասում նշված «բարձրաստիճան պաշտոնատար անձ» բառերի փոխարեն (սուբյեկտային կազմի առումով) այլ բառեր կարդալուն, իսկ «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն ՀՀ օրենքի 44-րդ հոդվածին վերաբերող կարգավորումներ համապատասխան հոդվածով նախատեսված չեն:

Ըստ Դ. Սանասարյանի՝ նույնիսկ եթե «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ամրագրված էթիկայի կանոնները շարունակել են գործել նաև 2018 թվականի հոկտեմբերի 1-ից հետո, ապա Պետական վերահսկողական ծառայության ղեկավարի կողմից արված հայտարարությունները որևէ կերպ չեն կարող դիտարկվել որպես «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ամրագրված էթիկայի կանոնի խախտում, քանի որ 2018 թվականի հոկտեմբերի 25-ի հայտարարությամբ, ինչպես նաև դրանից հետո արված բոլոր հայտարարություններում նշվել են ուսումնասիրության ընթացքում հայտնի դարձած ենթադրյալ խախտումների վերաբերյալ ընդհանուր բնույթի հայտարարություններ և հիմնադրամին հասցված վնասի վերաբերյալ նախնական հաշվարկներ: Բոլոր հայտարարությունների հիմքում ընկած են եղել Պետական վերահսկողական ծառայության կողմից կատարված ուսումնասիրության ընթացքում հայտնի դարձած կամ դրա արդյունքում կազմված տեղեկանքում արտացոլված որոշ դրվագներ: Հայտարարությունները կատարվել են հաշվի առնելով քննարկվող հարցի կարևորությունը, դրա նկատմամբ հանրային հետաքրքրությունը և տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքները: Ընդ որում՝ համապատասխան հայտարարություններ կատարելիս Պետական վերահսկողական ծառայության ղեկավարի կողմից դրսևորվել է զսպվածություն և անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանում, մասնավորապես՝ բազմիցս նշվել է, որ ուսումնասիրության ընթացքում հայտնաբերված ենթադրյալ խախտումների վերաբերյալ իրավական գնահատական կտրվի իրավապահ մարմինների կողմից, իսկ խախտումներն ու դրանք կատարած անձանց շրջանակը որևէ կերպ չի անհատականացվել:

Ըստ Դ. Սանասարյանի՝ Պետական վերահսկողական ծառայության ղեկավարի 2019 թվականի հունվարի 11-ի հայտարարությունը որևէ կերպ չի կարող դիտարկվել որպես ճնշում իրավապահ մարմինների նկատմամբ, առավել ևս չի կարող դիտարկվել որպես գործողություն, որը կարող էր հանգեցնել «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ամրագրված էթիկայի կանոնի առերևույթ խախտման: Այդ առումով, Ծառայության ղեկավարի կողմից մամուլի ասուլիսի ժամանակ հնչեցրած միտքն ըստ էության արտահայտել է Ծառայության կարծիքը կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ և բխել է ուսումնասիրությունների արդյունքում ձեռք բերված տվյալներից: Անմեղության

կանխավարկածի պահպանման սկզբունքի խախտումն ինքնին ենթադրում է անձանց անհատականացում, մինչդեռ, քննարկվող միտքը որևէ կերպ չի բացահայտում ենթադրյալ հանցանք կատարած անձանց ինքնությունները:

Դ. Սանասարյանը, վկայակոչելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, նշում է, որ ուսումնասիրության ընթացքում հայտնի դարձած առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող տեղեկությունները Պետական վերահսկողական ծառայությունն իրավասու էր ուղարկելու ինչպես ՀՀ գլխավոր դատախազություն, այնպես էլ այլ իրավապահ մարմիններին: Բացի այդ, ըստ Դ. Սանասարյանի, հիշյալ համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ քրեական գործ հարուցելու հապաղումը կարող է հանգեցնել անհետաձգելի քննչական գործողությունների կատարման անհնարինության, ինչը հաշվի առնելով, Պետական վերահսկողական ծառայությունը որդեգրել է քաղաքականություն առ այն, որ վերահսկողական գործառույթ իրականացնելու ընթացքում հայտնաբերված առերևույթ հանցակազմի հատկանիշներ պարունակող տեղեկություններն անհապաղ տրամադրվեն համապատասխան իրավապահ մարմնին:

Ելնելով վերոգրյալից՝ Դ. Սանասարյանը գտնում է, որ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 26-ի թիվ 27-Ա որոշմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

4. Վարույթի առարկան և շրջանակը

Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 26-ի թիվ 27-Ա որոշման մեջ արձանագրված է, որ Հանձնաժողովն, առաջնորդվելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, իրավասու է անդրադառնալ Պետական վերահսկողական ծառայության պետ Դ. Սանասարյանի կողմից Օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ամրագրված էթիկայի կանոնի («իր գործունեությամբ նպաստել իր զբաղեցրած պաշտոնի և իր ներկայացրած մարմնի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը») առերևույթ խախտման հարցին:

Վերոնշյալի առնչությամբ, Հանձնաժողովը գտնում է, որ սույն վարույթի շրջանակում քննարկման առարկա կարող է դառնալ բացառապես հետևյալ հարցադրումը՝ արդյո՞ք Պետական վերահսկողական ծառայության կողմից Երևանի պետական համալսարանում իրականացված ուսումնասիրության առնչությամբ Պետական վերահսկողական ծառայության պետ Դ. Սանասարյանի վարքագիծը՝ նրա կողմից արված հրապարակային հայտարարությունները և գրառումը՝ «...ԵՊՀ-ն առաջիկայում կվերջացնենք, լուրջ խախտումներ կան ԵՊՀ-ում ևս», «... նախնական տվյալներով, երկու անգամ կամ ավելի գերազանցելու է Ագրարային համալսարանին», «ծախսերը ուսումնասիրելով, կարող ենք ասել, որ բավականին լուրջ թիվ է: Էդ թվում քրեական հանցագործության տարրեր կան», «ԵՊՀ-ում շուրջ 2 ամիս տևած ուսումնասիրության արդյունքները ուղարկվեց դատախազություն: Ըստ մեր նախնական գնահատականի հիմնադրամին

հասցվել է ավելի քան 800 մլն դրամի վնաս: Սակայն հավաստիացնում եմ, որ եթե ավելի երկար ուսումնասիրեինք, վնասների արձանագրումները կավելանային:», «Ես երաշխավորում եմ, վստահեցնում եմ ձեզ, որ այս գործը դատարան է գնալու:», բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնի խախտում է, թե ոչ՝ նրա զբաղեցրած պաշտոնի և նրա կողմից ներկայացրած մարմնի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը նպաստելու դիտանկյունից:

Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի գործառույթները սպառիչ թվարկված են Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասով, Հանձնաժողովն իրավասու չէ անդրադառնալ Դիմողի կողմից հիշատակված հարցերի այն շրջանակին, որոնք առարկայական հիմքով դուրս են Հանձնաժողովի իրավասությունից:

5. Իրավական հիմքերը

Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի գործառույթներից է բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի կանոնների խախտման բացահայտումը (բացառությամբ դատավորների և դատախազների պաշտոնեական լիազորությունների իրականացմանն առնչվող էթիկայի կանոնների խախտումների, ինչպես նաև պատգամավորների կողմից էթիկայի կանոնների խախտումների) և դրանց վերացմանն ու կանխարգելմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը Հանրապետության Նախագահին, Ազգային ժողով, կառավարություն:

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված է, որ մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորումը «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասում նշված «բարձրաստիճան պաշտոնատար անձ» բառերի փոխարեն (սուբյեկտային կազմի առումով) հարկ է կարդալ. «... վարչապետին ենթակա մարմինների ղեկավարները»: Հետևաբար՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց (այդ թվում՝ Վարչապետին ենթակա մարմինների ղեկավարների) էթիկայի կանոնների խախտման բացահայտումը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի՝ Օրենքով ամրագրված գործառույթն է: Օրենքի 43-րդ հոդվածը համակարգային առումով կապված է Օրենքի 44-րդ հոդվածի հետ, քանզի Հանձնաժողովի՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի կանոնների խախտման բացահայտման գործառույթն իրացվում է վարութային ընթացակարգերի շրջանակում, որոնք մանրամասնված են Օրենքի 44-րդ հոդվածում: Ուստի՝ Օրենքի 43-րդ և 44-րդ

հոդվածում «բարձրաստիճան պաշտոնատար անձ» բառերի ներքո սուբյեկտային կազմի առումով հասկացվում է սուբյեկտների նույնական կազմը:

«Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետին և «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Պետական վերահսկողական ծառայությունը Վարչապետին ենթակա մարմին է:

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի 54-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ նույն օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասում հիշատակված վարքագծի կանոնագիրքը ընդունվում (սահմանվում) է մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը: Մինչ այդ շարունակում են գործել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 28-րդ հոդվածի դրույթները: Հիշյալ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ պետական պաշտոն զբաղեցնող անձանց ...՝ նույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով: Այդ առնչությամբ, հարկ է նկատի ունենալ, որ օրենսդրի կողմից սահմանված պայմանը՝ վարքագծի կանոնների սահմանումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով, կատարված չէ, այսինքն՝ վարքագծի կանոնագիրքը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ընդունված չէ՝ պայմանավորված նշված մարմնի կազմավորված չլինելու հանգամանքով: Հետևաբար՝ մինչև վերը նշված պայմանի կատարումը շարունակում են գործել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 28-րդ հոդվածի դրույթները:

Վերոգրյալը հավաստվում է նաև այն հանգամանքով, որ Օրենքի վերոհիշյալ դրույթը «Arlis» Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում նշվում է որպես գործող իրավադրույթ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը... Հետևաբար՝ «Մինչ այդ շարունակում են գործել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 28-րդ հոդվածի դրույթները» իրավանորմը պետք է մեկնաբանվի որպես «մինչև վարքագծի կանոնագրքի ընդունումը»:

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնները նորմերի համակարգ է, որոնք միտված են ապահովելու բարձրաստիճան պաշտոնատար անձի պատշաճ վարքագիծը, ամրապնդելու հասարակության վստահությունը հանրային ինստիտուտների նկատմամբ: Օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ամրագրված է բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնը՝ իր գործունեությամբ նպաստել իր զբաղեցրած պաշտոնի և իր ներկայացրած մարմնի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը:

Օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝ էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ Հանձնաժողովը վարույթ կարող է հարուցել անձի դիմումի հիման վրա:

Օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ վարույթ հարուցելուց հետո՝ 5-օրյա ժամկետում, այդ մասին տեղեկացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձը, որը 10-օրյա ժամկետում Հանձնաժողով է ներկայացնում իր առարկություններն ու բացատրությունները: Հարուցված վարույթի արդյունքում Հանձնաժողովի եզրակացությունն ընդունվում է մեկամսյա ժամկետում:

6. Հանձնաժողովի հետևությունները

Անդրադառնալով Պետական վերահսկողական ծառայության պետ Դ. Սանասարյանի կողմից էթիկայի կանոնի խախտման հարցին՝ Հանձնաժողովը փաստում է, որ հանրային ծառայությունը հիմնված է որոշակի արժեքների վրա: Մասնավորապես, բարձրաստիճան պաշտոնատար անձինք իրենց վարքագծով պետք է նպաստեն հանրության շրջանում այն համոզմունքի ամրապնդմանը, որ պաշտոնատար անձանց գործունեությունը միտված է հանրային շահերի արդարացի սպասարկմանը: Այս տեսանկյունից կարևորվում է Օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ամրագրված բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնը՝ իր գործունեությամբ նպաստելու զբաղեցրած պաշտոնի և ներկայացրած մարմնի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը:

Հանձնաժողովը գտնում է, որ Պետական վերահսկողական ծառայության պետ Դ. Սանասարյանի վարքագիծը՝ նրա կողմից արված հրապարակային հայտարարությունները և գրառումը, որոնք մեջբերված են սույն եզրակացության 4-րդ կետի երկրորդ պարբերությունում, չեն նպաստել իր զբաղեցրած պաշտոնի և իր ներկայացրած մարմնի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Դ. Սանասարյանի դրսևորած վարքագիծը նախադրյալներ է ստեղծել իր՝ որպես պաշտոնատար անձի կողմից ոչ օբյեկտիվ լինելու վերաբերյալ մտայնության ձևավորման համար, քանզի Պետական վերահսկողական ծառայության կողմից Երևանի պետական համալսարանում իրականացվող ուսումնասիրությունների առնչությամբ նրա՝ վերը մեջբերված հրապարակային հայտարարությունները և գրառումը ողջամտորեն կարող են ընկալվել և

մեկնաբանվել որպես կանխակալ վերաբերմունքի դրսևորում և «ուժի ցուցադրում»:

Այսպես, ՀՀ պետական վերահսկողական ծառայության պետի 2018 թվականի հուլիսի 30-ի N 011 հանձնարարագրի 4-րդ կետով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում ուսումնասիրություն կատարելու ժամկետ է սահմանվել 2018 թվականի հուլիսի 30-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 27-ը:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի 2018 թվականի հոկտեմբերի 1-ի N 31 Ա հրամանի 1-ին կետով ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի 2018 թվականի N 011 հանձնարարագրի 4-րդ կետում «սեպտեմբերի 27» բառերը փոխարինվել են «նոյեմբերի 30» բառերով:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի 2018 թվականի նոյեմբերի 30-ի N-70 Ա հրամանով ՀՀ պետական վերահսկողական ծառայության պետի 2018 թվականի հուլիսի 30-ի N 011 հանձնարարագրի 4-րդ կետում «2018թ. նոյեմբերի 30» բառերը փոխարինվել են «2019թ. հունվարի 31» բառերով (հրամանը ստորագրվել է ժամանակավոր պաշտոնակատարի կողմից):

Վերոնշյալը հիմք է տալիս փաստելու, որ Դ. Սանասարյանի՝ սույն եզրակացության 4-րդ կետի երկրորդ պարբերությունում մեջբերված մի շարք հրապարակային հայտարարություններ արվել են Պետական վերահսկողական ծառայության կողմից «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում ուսումնասիրություն իրականացնելու ընթացքում: Նկատի ունենալով հիշյալ հանգամանքը, Պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքների ամփոփման առնչությամբ օրինադրույթների բովանդակությունը («Տեղեկանքը տրամադրվում է վերահսկվող օբյեկտին դրա վերաբերյալ կարծիք ներկայացնելու նպատակով: Ուսումնասիրության արդյունքներն ընդգրկում են տեղեկանքը և ուսումնասիրության շրջանակներում ձեռք բերված բոլոր նյութերը, ներառյալ՝ տեղեկանքի վերաբերյալ ներկայացված կարծիքը» («Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մաս), այդ առնչությամբ այն հանգամանքը, որ Պետական վերահսկողական ծառայության կողմից Երևանի պետական համալսարանում իրականացված ուսումնասիրության արդյունքները դատախազություն ուղարկելու վերաբերյալ գրառումը Դ. Սանասարյանը ֆեյսբուքյան իր էջում կատարել է այն օրը (2018 թվականի դեկտեմբերի 28-ին), որ օրը ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են Երևանի պետական համալսարանին՝ Հանձնաժողովը, կարևորելով այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են հարցի նկատմամբ հանրային հետաքրքրությունը, հանրային իրազեկվածության և հաշվետվողականության ապահովումը, գտնում է, որ Դ. Սանասարյանի՝ սույն եզրակացության 4-րդ կետի երկրորդ պարբերությունում մեջբերված հրապարակային հայտարարությունները և գրառումը ողջամտորեն կարող են պետական մարմնի կամ դրա ղեկավարի կանխակալ լինելու և այդ մարմնի կողմից իրականացված վերահսկողության արդյունքների կանխորոշված լինելու տպավորություն ստեղծել կամ համոզմունք ձևավորել:

Հանձնաժողովը գտնում է, որ Պետական վերահսկողական ծառայության կողմից Երևանի պետական համալսարանում իրականացվող ուսումնասիրության առնչությամբ հանրային իրազեկվածության և հաշվետվողականության ապահովման գործընթացում Դ. Սանասարյանը պետք է դրսևորեր որոշակի զսպվածություն և շրջահայացություն: Այդ առնչությամբ, Հանձնաժողովն ընդգծում է հանրային պաշտոնատար անձանց կողմից արվող հրապարակային հայտարարությունների շրջանակում համապատասխան ձևակերպումների ընտրության կարևորությունը՝ հանրային ծառայության շահերին չվնասելու նպատակով:

2019 թվականի հունվարի 11-ին հրավիրված մամուլի ասուլիսի ընթացքում Դ. Սանասարյանի՝ «Ես երաշխավորում եմ, վստահեցնում եմ ձեզ, որ այս գործը դատարան է գնալու:» (https://factor.am/113964.html) հայտարարության առնչությամբ, Հանձնաժողովը գտնում է, որ այն բովանդակում է հրամայական շեշտադրումներ, կանխակալության տարրեր, ուստի՝ հարիր չէ հանրային պաշտոն զբաղեցնող անձին: Պետական վերահսկողական ծառայության պետը չի կարող երաշխավորել, որ որևէ առերևույթ իրավախախտման վերաբերյալ գործ կգնա դատարան:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ **Հանձնաժողովը եզրակացնում է.**

1. Պետական վերահսկողական ծառայության պետ Դավիթ Սանասարյանը թույլ է տվել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ամրագրված էթիկայի կանոնի խախտում, այն է՝ իր գործունեությամբ չի նպաստել իր զբաղեցրած պաշտոնի և իր ներկայացրած մարմնի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը:

2. Սույն եզրակացությունը բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից կարող է բողոքարկվել դատական կարգով՝ մեկամսյա ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՄԵՆ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԷԴԳԱՐ ՇԱԹԻՐՅԱՆ

ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ